ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3851-Ա « 05 » օգոստոսի 2026թ.

ԱՎԱՆ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ Հ.2/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք են հանդիսացել Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի ղեկավարի հ.Ն/57795-25 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն/41017-26 եզրակացությունը, անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման հ.2113938 վկայականը և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին Կ-08042026-01-0303 որոշումը:

Տեղագրական հանույթի ճշգրտման արդյունքում պարզվել է, որ Ավան, Իսահակյան թաղամասի հ.2/4 հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 8590.2քմ՝ անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման հ.2113938 վկայականում ամրագրված 8197.0քմ մակերեսի փոխարեն. հողամասի մակերեսների տարբերությունները նախկինում երկրաչափորեն և ներկայումս էլեկտրոնային տարբերակով իրականացված հաշվարկների արդյունք է /տեխնիկական վրիպակ/:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի համաձայն՝ 8206.32քմ մակերեսով հողամասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման, իսկ 383.88քմ մակերեսը՝ բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողերի գոտիներում:

ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 6-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2026 թվականի հուլիսի 16-ի հ.Ն/41017-26 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Ավան, Իսահակյան թաղամասի հ.2/4 հասցեում գտնվող հողամասի մակերեսը կազմում է 8590.2քմ, որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Ավան, Իսահակյան թաղամասի հ.2/4 հասցեում գտնվող 8590.2քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը (կատեգորիան) սահմանել բնակավայրերի, 8206.32քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ սահմանել հասարակական կառուցապատման, իսկ 383.88քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ ընդհանուր օգտագործման:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246